Արձանագրություն N 4

«ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-18/1» ծածկագրով գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Սպիտակ 18.10.2018թ.

ժ. 12:00

Մասնակցում են՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Միրզոյան

Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Համբարյան, Ն. Յարմալոյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Ավետիսյան

Ընդունել ի գիտություն, որ ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի «ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ի և «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ի (ընկերությունները հանդես են գալիս համատեղ գործունեության պայմանագրով) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցմանը տրամադրվել է տեղեկատվություն, ըստ որի ընկերությունների հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարները պակաս չեն ներկայացված գնային առաջարկից, ինչպես նաև հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքները չեն գերազանցում ակտիվների հաշվեկշռային արժեքները: Նույն տեղեկատվության համաձայն՝ «ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց հարկային պարտավորություններ, սակայն, «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 209 000 (երկու հարյուր ինը հազար) ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություններ:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. «ՎԱՀՐԱԴՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ի և «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ի հայտը մերժել, իսկ «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ի տվյալները ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Որոշումն ընդունվել է՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

2. Սպիտակ համայնքի կարիքների համար փողոցային լուսավորության գոյություն ունեցող համակարգերի արդիականացման և նոր համակարգերի կառուցման աշխատանքների ձեռքբերման ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Որոշումն ընդունվել է՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Հ. Միրզոյան

Անդամներ՝ _____ Լ. Համբարյան

_____ Ն. Յարմալոյան

Քարտուղար՝ _____ Ա. Ավետիսյան